Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄՈՒՇԵՂ ՖՈԼՅԱՆ

ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ԺԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

Ա II/2451

ԲԱՆԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ—1930

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՍՆԵԼԻՔՆԵՐԸ

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ ՊԻՏԻ ՀԵՏԵՎԵՆ ՃԱՇԱՐԱՆԻ ՎՈՂՋ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Վարչությունը, որին վիճակված է գեկուցաբեր ապատոպական ընկերության ամբողջ գործերը՝ բնական է, որ հնարավորություն չի ունենա հսկելու առանձին ճաշարանների, գործունեության ընթացքը: Ճաշարանների աշխատանքների հսկողության, ստուգման և ոչակցության նպատակով, այլ և ճաշարանների վարչական գեկավարությունը և Ապատոպական կոոպերացիայի մեջ փոխադարձ կապն ամրացնելու համար ՀՍԽՀ բոլոր քաղաքային և բանվորական ճաշարանների կից կազմակերպվում են ճաշարանային հանձնաժողովներ:

Ճաշարանային հանձնաժողովները պիտի հետաքրքրվեն գլխավոր առմամբ այն հարցով, թե ճաշարանն ինչպես է ապասարկում ճաշարանի հաճախորդներին:

Ճաշարանի գործունեությունը կայանում և հաջող ապասարկման մեջ (վարակը) և այլ պատնում և ճաշարանի աշխատանքների գնահատման չափանիշը:

Եթե ճաշի (պատրաստվող սննդի) վորակը լինի լավ, յեթե այդ սնունդը թանգ չի նստում ճաշողների վրա, յեթե ճաշարանի աշխատակիցները պահանջվող քաղաքավարի վերաբերմունք են ցույց տալիս, այն դեպքում կարելի յե ասել, վոր ճաշարանը լավ ե աշխատում: Իսկ, յերբ պատրաստվող ճաշերն անորակ են և թանգ, յեթե մատուցողները կոպիտ են վերաբերվում դեպի հաճախորդները՝ նրանակում ե, վոր ճաշարանի գործը վատ ե դրված:

Ճաշարանային հանձնաժողովները պիտի լայն աջակցություն ցույց տան վարչությանը, հասարակական սննդի կազմակերպման ընդհանուր գործին:

Պաշտպանելով սպառողների մի խմբի շահերը, ճաշարանային հանձնաժողովը չպիտի մոռանա և աչքաթող անի, հասարակական սննդի շահերը ամբողջությամբ.

Վորքան մեծ խնայողություն ստեղծվի ճաշարանների մեջ, այնքան ավելի կմեծանան հնարավորությունները՝ կազմակերպելու նոր ճաշարաններ, ապահովելով ամբողջ պահանջը ներկայացվող հասարակության կողմից:

Ճաշարանային հանձնաժողովները պահպանելով ճաշարանն ամբողջությամբ, ապահովելով նրա նորմալ ընթացքը, ոգնում ե դրանով Սպառողական Ընկերությանը, ավելի զարգացնել ու լայնացնել հասարակական սննդի գործը:

Ճաշարանային հանձնաժողովները ավելի մոտիկ կանգնած լինելով մասսաներին, հայտնաբերելով նրանց բողոքները, կարիքները ու պահանջները, դրանով մեծ ոգնություն են ցույց տալիս վարչության, ավելի ճիշտ դիմ տանելու հասարակական սննդի գործում: Բացի դա ճաշարանի հանձնաժողովն ավելի լավ և դիտում ճաշարանի բոլոր թերությունները և ցույց տալիս այն վարչությանը, քան դա կարող էր անել մի ուրիշը. և վերջապես ճաշարանային հանձնաժողովը ձեռք է բերում տնտեսական դիտելիքներ, որոնք մեծ արժեք են ներկայացնում վարչության և վերատուգիչ հանձնաժողովի համար:

Ճաշարանային հանձնաժողովներին շատ ժամանակ տրվում են զանազան հանձնարարություններ՝ բնական մնացորդի պարզումը հաշվետուումը, արձանագրություններ կազմելը, տուգումներ և այլն:

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՒԺԵՂԱՑՆՈՒՄ Է ՄԱՍՍԱՅՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծանոթություն.—Ճաշարանային հանձնաժողովները ընտրվում են կոլեկտիվների ընդհանուր ժողովներում, ճաշարաններում ապասարկվող բանկոսպի անդամների թվից 7-ից մինչև 13 հոգու կազմով:

2. Յուրաքանչյուր ճաշարան ապասարկում է

տանձին մի ձեռնարկ (դրծտրան, տրտոել, կոլխոզ, սովխոզ),—ճաշարանային հանձնաժողովն ընտրվում է այդ ձեռնարկի փայատերերի թվին համեմատական չափով:

3. Ճաշարանային հանձնաժողովները տանում են իրենց աշխատանքները հասարակական կամավոր հիմունքներով և աշխատավարձ չեն ստանում:

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճաշարանային հանձնաժողովը պարտավոր է հայտարերելու ճաշարանի բոլոր թերությունները, սխալներն ու չարաշահությունները: Ճաշարանային հանձնաժողովը պիտի իմանա այն ամենը, ինչ կատարվում է ձեռնարկության մեջ: Ճաշարանի սխալները կարող են կայանալ նրանում, որ վարչության կարգադրություններն ու հրահանգները չեն կիրառվում կյանքում կամ սխալ են կիրառվում, որի հետևանքով ճաշարանի գեկավարը կազմի և վարչության միջև կարող են ծագել վեճեր և այլն: Սխալները կարող են լինել բազմատեսակ· որինակ՝ նորմաների խախտում, վատերանյութերի անվերջ ոգտագործումը, մթերքների վոչ կանոնավոր մաքրելը, վարչի կարգադրություններին անուշադիր վերաբերմունքը, պրոդուկտներ, ուշացումներ և այլն:

Նմանորինակ սխալները կարող են կատարվել դիտավորյալ կերպով, որոնց անվանում ենք չարագործություն: Ճաշարանային հանձնաժողովը պարտավոր է հայտաբերել բոլոր սխալներն ու դիմել վերացման կոնկրետ միջոցների:

Վերն հիշված չարագործություններից բացի կարելի յե հանդիպել նաև հետևյալ վոչ պակաս դատապարտելի չարագործություններին ու չարաշահություններին. որինակ՝ մթերքների, գույքի և դրամի գեղծումը (գողանալ): Բնական է, վոր հնարավոր չէ նշել բոլոր տեսակի չարամիտ սխալները նրանք հայտնաբերվում են շատ հեշտությամբ ճաշարանին գործունեության ընթացքում:

Ճաշարանի աշխատանքները լավ հիմքերի վրա դնելը, հնարավոր կլինի սոսկ այն դեպքում, յերբ ճաշարանը խիստ խնայողություն կատարի, չի ունենա ավելորդ վերադիր ծախքեր և ընդհանրապես գործը կկազմակերպի ամենալավ վարկանշով, հաշվեառված, նախապես ծրագրված և այդ ամենը կատարվի դիտավորյալ կերպով:

ԱՅԺՄ ԱՆՑՆԵՆՔ ԱՅՆ ԽՆԴՐԻՆ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ ՊԻՏԻ ՁԵՌՔ ԱՌՆԻ ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Նկատելով ճաշարանի աշխատանքների մեջ վորոշ թերություններ՝ ճաշարանային

հանձնաժողովն առաջին հերթին պիտի պարզի նրա պատճառները, գտնի մեղավորին։

Ճաշարանային աշխատանքերի մեջ ծագող թերությունների պատճառները կարելի է բաժանել յերկու կատեգորիայի. առաջին դեպքում նրանք կարող են առաջանալ աշխատակիցների մեղքով կամ դիտավորյալ և յերկրորդ դեպքում՝ առնկախ պատճառներից (շենքի անհարմարության, վատ, հետամնաց կահավորման միջոցները և այլն)։ Կարևոր նշանակություն պիտի տալ այն խնդրին, թե վորքան համապատասխան է տվյալ վարիչը — իբրև ճաշարանի ղեկավար։ Նմանորինակ բացերի հայտաբերման ու վերացման գործի դլուխ պիտի կանգնած լինի ճաշարանային հանձնաժողովը. այդ է լինելու նրա աշխատանքների հիմնական առանցքը։

Հայտաբերելով թերությունների պատճառները ճաշարանային հանձնաժողովը պիտի կտրուկ միջոցների դիմի վերացնելու այն։ Կարող են լինել մանր-մունր սխալներ, վորոնք կրեն սեզոնային բնույթ։ Նմանորինակ սխալները կարելի է վերացնել տեղում, սակայն այն դեպքում, յերբ խիստ խանգարված է լինում ճաշարանային աշխատանքների կարգը և նրա կանոնավորումը պահանջում է ղեկավարող մարմինների միջոցառումը՝ ճաշարանային հանձնաժողովը պարտավոր է մանրամասն ծանոթացնելու վարչությանը գործի իսկական դրության հետ։

Չեղծարարություն հայտաբերվելու դեպքում առանց վրեժ ձգձգումի գործը պիտի ուղղվի վարչություն: Բոլոր այն մատերիալներին, որոնք ուղարկվում են վարչությանը, ճաշարանային հանձնաժողովը պիտի կցի իր բացատրությունը, յեղրակացության հետ միասին՝ ցույց տալով, թե այդ թերությունն ինչից և առաջացել. (կոնկրետ նշել պատճառները):

Յեթե թերությունը նկատված է հաճախորդի կողմից և բողոքի կարգով ներկայացվում է վարչությանը, ճաշարանային հանձնաժողովը պիտի հետևի կամ շտապեցնի պատասխանը:

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Վերոհիշյալ ճաշարանային հանձնաժողովները կարողանան կատարել վարչության կամ վերատեսուչ հանձնաժողովի կողմից տրված հանձնարարությունները, անհրաժեշտ է, որ նրանք ունենան որոշ իրավունքներ:

1) Ճաշարանային հանձնաժողովն իրավունք ունի ծանոթանալ բոլոր տեսակի հրահանգների, շրջաբերականների, այլ և գրությունների ու տրամանագրությունների հետ, որոնք ստացվում են վարչությունից: Իրավունք ունի ծանոթանալ բողոքի գրքի, հաշվետվությունների և այլ հաշիվների հետ:

2) Ճաշարանային հանձնաժողովն իրավունք ունի, այցելել խոհանոցը, պահեստը, դուքսաենյակը, սառցատունը և այլն:

3) Ճաշարանային հանձնաժողովն իրավունք ունի մասնակցելու ձեռնարկության զանազան պայմանագրեր կնքելու գործին, նույնպես և տարեկան կամ յեռամսյակային ծրագրերի և այլն միջոցառումների պլանային սխեմի աշխատանքներին: Այդպիսով հանձնաժողովն ավելի յե թափանցում, խորանում ամբողջ ճաշարանի գործունեության մեջ:

4) Ճաշ. հանձնաժողովի ուշադրության կենտրոնը, ինչպես նշվեց վերևում, ճաշողների շահերի պաշտպանության գործը պետք և լինի: Դրա համար ել հանձնաժողովին իրավունք և տրվում ճաշարաններից ընդունել բողոքներ (գրավոր կամ բանավոր) և ներկայացնել վարչության իր յեզրակացության հետ միասին:

5) Ճաշարանային հանձնաժողովներին իրավունք և տրվում մասնակցելու վարչության նիստերին խորհրդակցական ձայնով:

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՇԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Ճաշարանային հանձնաժողովները պիտի լավ հիշեն, որ իրենք ադմինիստրատիվ իրավունքներ չունեն և վոչ մի դեպքում չպիտի խառնվեն վարչական գործերին (չպետք և չըփոթեն իրենց ֆունկցիաները):

ճաշարանային հանձնաժողովի անդամները իրավունք չունեն ներգրավել կամ ցուցմունքներ տալ աշխատակիցներին. այդ կարելի է կատարել միայն վարիչի միջոցով: Անընդունելի պիտի համարել նաև այն, որ շատ դեպքերում ճաշարանային հանձնաժողովի անդամները հետևում են աշխատակիցների յուրաքանչյուր քայլին: Դա ընդհանրապես առավել կազմակերպչական չունի, ընդհակառակը դանդաղեցնում և աշխատանքը:

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՏ

Պրակտիկայում լինում են դեպքեր,— երբ ճաշարանային հանձնաժողովները չփոխում են իրենց ֆունկցիաները վերատուգիչ հանձնաժողովի ֆունկցիաների հետ:

Վերատուգիչ հանձնաժողովը հանդիսանում է ընկերության հիմնական վերահսկողական-վերատուգողական մարմինը և նրա միջոցով և անցնում բոլոր աստիճանի գործունեությունները: Վերատուգիչ հանձնաժողովը պարտավոր է ոչ թե միայն հայտնաբերելու թերությունները, այլ և գտնելու նրա պատճառները. այդ գործում կարող են մեծ ազնություն ցույց տալ ճաշարանային հանձնաժողովները և դա բնական է, քանի որ վերջիններս ավելի մոտ են կանգնած ճաշարանի գործունեությանը և նրա բարդ ատանձնահատկություններին:

ընդհանրապես ճաշարանային հանձնաժողովները ամեն տեսակի հարցերով պիտի դիմեն վարչությանը, սակայն այն դեպքում, երբ նկատվում է, որ վարչությունը տվյալ հարցի լուծումը ձգձգում է—ճաշարանային հանձնաժողովներին իրավունք է տրվում դիմելու կամ հարցը տեղափոխելու վերատուչիչ հանձնաժողովին:

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԵԼԻՔՆԵՐՆ ԵՆ՝

1) պարզել ճաշողների միջին թիվը.

2) ճաշողների միջին աշխատավարձը.

3) պարզել թե ճաշողների աշխատավարձի որ՞ը տոկոսն է ընդգրկվում ճաշարանի կողմից.

4) ինչ ժամերին են վերջացնում աշխատանքն այն գործարանները, հիմնարկները ու դպրոցները, որոնց սպասարկում է ճաշարանը, արդյո՞ք ճաշերի բաշխման ժամերը համապատասխանում են վերոհիշյալ պայմանների հետ, թե ոչ.

5) կան արդյոք ճաշող բանվորների մեջ այնպիսիները, որոնք աշխատելիս լինեն վատանպատոր ցեխերում և կարիք են զգում հատուկ ճաշերի (դիետական և վիտամինական և այլն).

6) որ ժամերին է նկատված ճաշողների ամենի մեծ հոսանք.

7) յեթե ճաշարանը չի կարողանում բավարարել ճաշողների պահանջը, ապա ինչն է

խանգարիչ հանդիսանում. արդյոք նրանից է, որ շենքն անհարմար և կամ կահավորումն է վատ, թե նրանից, որ այդ հարցով դեռ չեն դրսևորվել համապատասխան մարմինները:

ՃԱՇԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ճաշարանի աշխատանքների լավացման և-յուրաքանչյուր պայմանը՝ հարմար շենքի ունենալն և նրա ռացիոնալ գործածումը: Այս տեսակետից ճաշարանային շենքերը քննության ենթարկելու ժամանակ անհրաժեշտ և պարտադիր հետևյալը՝

1) ճաշարանի արտաքին տեսքը, վերքան դրսևորիչ է, արդյոք գրգռող յենթակա չէ.

2) մաքուր են արդյո՞ք ճաշարանի հրապարակը, պարտեզը, կամ դրսի մայթերը.

3) շենքի մեծությունը բավարարում է արդյո՞ք ճաշողների յուրաքանչյուր հոսանքի ժամերին.

4) ունի արդյո՞ք ճաշարանը չոգատարածման մաս (հատակագիծ).

5) պետք քննության առնել նաև այն, թե որքան է լուսավորվում ճաշարանի ներսը.

6) ապահովել ճաշարանի մաքրությունը.

7) սանիտարական, առողջապահության տեսակետից անհրաժեշտ և ճաշարաններում դնել վենտիլյացիա, յեթե այդպիսին բացակայում է.

8) ունի արդյո՞ք ճաշարանը բաղնիքի դիրք, արկղ, հայտարարության տախտակ և այլն.

9) ճաշարանի շենքը վերանորոգման կարիք ունի, թե վոչ։

ԿԱՇԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ճաշարանային հանձնաժողովը պիտի քննության առնի ճաշարանի ինվենտարի ամբողջության ու պիտանիության խնդիրը։

1) առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե տվյալ ճաշարանը վոր տիպի կամ իրմբին է պատկանում (տնայնագործական, կիսամեքենայացված, թե լրիվ մեքենայացված).

2) վորոնք են նրա կահավորման միջոցները (սեղան քննության յենթակա պարագաների հերթականությունը).

3) ինվենտարի և կահավորման այլ միջոցները լրիվ է՞ն թե վոչ.

4) յեթե ,ճաշարանը տնայնագործական կիսամեքենայացված և կամ մեքենայացված է, կարողանում է բավարարել ճաշարանի լրիվ պահանջը, թե վոչ.

5) պարզել ճաշարանի բեռնվածությունը կամ վոչլրիվ բեռնվածությունը։

6) չի զգացվում արդյո՞ք ճաշի պարագաների պակաս (ափսեներ, դանակներ, պատառաքաղ և այլն)։

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՅԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՆ

Ճաշարանի ամենահիմանդոտ և աչքի ընկնող կողմը դա անբավարար մատուցման գործն է. պետք է հետևվել, թե վորքան ուշադիր է մատուցողը հանդեպ հաճախորդին. (մատուցողից պահանջվում է՝ ոգնել ճաշողներին, յուր ընտրություն կատարել ճաշերի մեջ, հետևվել վոր մատուցողը կոպտություններ չանի, հսկել վոր չխոսի հաճախորդներին ճաշերի դնելի մեջ: Դա հաճախ տեղի յե ունենում այնպիսի ճաշարաններում, վորտեղ պահում են խմիչքներ: Ցերեկով վերոհիշյալ հանգամանքներից ճաշարանային հանձնաժող. պարտավոր է այն ոգնա դատավարել հերթապահությունը, վոր ճաշարանի յուրաքանչյուր ժամերին միշտ ներկա լինի հանձնաժողովի անդամներից մեկը:

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՊԻՏԻ ԽԻՍՏ ՀԵՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կարևոր է պարզել՝

1) *վորքան հաճախ է մաքրվում ճաշարանի հատակը (լվացվում կամ փոշին սրբվում*

2) *ի՞նչ դրության մեջ է խոհանոցի չենքը (հատակը, առաստաղը, պատերը) գոյություն ունեն արդյոք շոգեքաշ մեքենաներ, վորոնցով հնարավոր լինի մաքրել խոհանոցի ծանր ողը.*

3) արդելել ճաշարանի ներսում տանելու այնպիսի աշխատանքներ, որոնք որոշ մի առընչություն չունեն ճաշարանային աշխատանքների հետ և հակասանիտարական դրություն են ստեղծում. որինակ՝ լվացք անել, հարթուկել, չոր հորացնելը և այլն.

4) մտածված է այն մասին, որ բոլոր սեղանների վրա լինեն ջրամաններ յեռացրած ջրով.

5) ճաշի պարագաները մաքրելու համար ինչ հարմարություններ են ստեղծված և որքան մաքուր են լվացվում ճաշի սամանները:

6) խոհանոցում դրոյացած աղբը որքան յերկար է մնում խոհանոցում.

7) սեղաններն ազատվելուց հետո որքան ուշադիր են հավաքվում սամանները և մաքրվում սեղանները.

8) կան արդյո՞ք ճաշարանի ներսում կրծող կենդանիներ. յեթե այո, ինչ միջոցներ են ձեռք առնված նրանց վոչնչացնելու համար.

9 ճաշարանին յենթակա բոլոր մյուս շենքերը, պահեստները և այլն, բարեկամ դրության մեջ են, թե վոչ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ձեռնարկության վրա դրված հույսերը հնարավոր է արդարացնել սոսկ այն դեպքում, յերբ ճաշարանի աշխատակիցների մեջ կատարված լինի աշխատանքների բաժանում, յերբ

յուրաքանչյուր աշխատակից իմանա իր պարտականությունները, ճանաչի իր աշխատանքի շրջանը։ Այդ տեսակետից ճաշարանային հանձնաժողովը պիտի հետաքրքրվի հետևյալ հարցերի պարզաբանումով.

1) աշխատող ուժերը վորակյալ են, թե վոչ.

2) ճաշարանի աշխատակիցները ստանում են վորևե դեկավարություն.

3) ուսումնասիրված և արդյոք յուրաքանչյուր աշխատակիցը և վորքան ճիշտ և կատարված աշխատանքների բաժանումը նրանց մեջ։

4) հայտնված և ճաշարանի աշխատակցին իր պարտականությունների մասին։

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ա) Մանակցել ճաշարանի աշխատանքի ծրագրի և նախահաշվի մշակման և վորոշել ճաշարանի ներքին կարգապահության կանոնները, յերնելով սեղանի պայմանների և ճաշակների շահերից.

բ) Հսկել, վոր ճաշարանին բաց թողնվող մթերքներն ու հում նյութերը լինեն լավ վորակի և մատակարարվեն ժամանակին.

գ) Հետևել, վոր ճաշարանում մթերքները, հում նյութերը և ընդհանրապես բոլոր ապրանքները պահեստներում, ատելյաներում և մառաններում պահվեն կանոնավոր։

դ) ուսումնասիրել ճաշարանի կարիքները և մատնակցել ճաշացուցակի կազմելուն (մենյու).

յե) հետևել ճաշարաններում մթերքների ԾԱԽՍՄԱՆԸ և կերակուրների նորմաների ստուգելուն կիրառմանը:

զ) հետևել պատրաստվող սննդի վորակին և բաց թողնվող բաժիններին (պորցիաներին).

է) հետևել ճաշարաններում գոյություն ունեցող գները համապատասխանեն վարչության նշանակած գներին.

ը) հետևել ճաշարանի մնացորդների և փչացած կերակուրների նպատակահարմար ոգտագործմանը (ուտիլիզացիա).

ժ) ազատել ճաշարանի ռացիոնալացման բոլոր ուշխատանքներին, ծախքերի կրճատմանը, ճաշերի վորակի լավացմանն ու ոգտագործման կանոնավորման գործին:

ժա) հսկողություն ունենալ ճաշարանների նորոգման, սարքավորման և գույքի դրության վրա. հոգ տանել վերջիններիս լրիվ ոգտագործման և պակասի լրացման մասին.

ժբ) հետևել ճաշարանի մաքրության ու սանիտարական դրությանը, ձեռք առնելով համապատասխան կազմակերպչական միջոցներ նկատված բացերը վերացնելու համար.

ժգ) կատարել կոոպերատիվ վարչության և վերատուչի հանձնաժողովի հատուկ կարգադրությունները.

2. Ճաշարանային հանձնաժողովն ակտիվ մասնակցություն և ունենում ճաշարանի կուլտ-կրթական աշխատանքներին (պատի թերթի, կինո, ռադիո և այլն). պայքարում և հաբրեցողության դեմ և տանում և կենցաղի ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ժողովրդականացման լայն ոգեստացիա:

3. Ճաշարանային հանձնաժողովներն ընդունում են բողոքներ և հայտարարություններ, որոնց մասին ըստ եության տալիս են ցեղրուկացություններ վարչության՝ ապահովելով վերջիններիս արագ քննություն ու պատասխաններ տալը, բայց այդ կոնոնավոր բապես հաշվի են առնում հաճախորդների ու աշխատակիցների կողմից ճաշարանի վերաբերյալ ռացիոնալիզատորական ձեռնարկումների վերաբերյալ բոլոր առաջարկներն ու վերջիններիս կենսագործման ընթացքը.

4. Ճաշարանային հանձնաժողովները հաշվետու են վարչության և իրենց ընտրողների առաջ, բայց այդ նրանք պարբերաբար ինֆորմացիա են տալիս ընդհանուր և կոոպերատիվ մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

1. Ճաշարանային հանձնաժողովի առաջին նիստը հրավիրվում է Բանկոոպի վարչության (կամ կազմակերպության) կողմից. այդ նիստերում ընտրվում և հանձնաժողովի նախագահ, քար-

Ա 24551

տուղար և բաշխվում աշխատանքը հանձնաժողովի անդամների մեջ։

2. Հանձնաժողովի հերթական նիստերը տեղի յեն ունենում տաս որը մեկ անգամ. այդ նիստերում լսվում են ճաշարանային հանձնաժողովների տուանձին անդամների առաջադրություններն ու ինֆորմացիան, այլև ճաշարանի ռացիոնալացման վերաբերվող առաջարկներն ու հայտարարությունները։

3. Ճաշարանային հանձնաժողովների նիստերի արձանագրություններն ուղարկվում են Բանկոոպի վարչություն (ի հաստատություն), վերստուգիչ հանձնաժողովին և. ճաշարանի վարիչին, կարիքի դեպքում նաև այն գործարկոմ-տեղկոմին, որի ընդհանուր ժողովում ընտրված է հանձնաժողովը։

4. Ճաշարանային հանձնաժողովի անդամներն իրենց հիմնակ. աշխատանքից ազատ ժամերին հերթապահություն են ստեղծում ճաշարանում։ Հերթապահի անուն ազգանունը պետք է ցուցադրված լինի ճաշարանի հաճախորդների համար։

5. Ճաշարանային հանձնաժողովը մշակում է իր գործունեության յեռամսյակային պլանը, կոնկրետացնելով ըստ ամիսների։

6. Ճաշարանային հանձնաժողովի հերթապահ անդամն իր բոլոր նկատողություններն ու դիտողությունները մտցնում է հատուկ գրքի մեջ, որպիսին պահվում է ճաշարանի վարիչի մոտ։

7. Ճաշարանային հանձնաժողովի հերթապահ անդամը ճաշարանի բացերի վերաբերմամբ, այլև աշխատակիցների մասին տեղյակ և զարձնում ճաշարանի վարիչին առանց իր կողմից անմիջական կարգադրություններ տալու։ Ճաշարանի վարիչն անհապաղ կատարում և խնդիրը թյուրիմացություններն ու բացերը վերացնելով կամ առանձին աշխատակիցներին կարգի հրավիրելով։

8. Ճաշարանի վարիչի հետ յուրջ տարաձայնությունների դեպքում հանձնաժողովի հերթապահն իրավատու է անմիջապես կապվել վարչության կամ վերատեսուչ հանձնաժողովի հետ՝ վերջիններիս ոգությամբ խնդիրը վերջնականորեն լուծելու համար։

Հայպոլիգրաֆի տպարան

Գնափակ 4423 Գրառեպ. 5793 ր. Տիրաժ 500

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0001604

[044.]

597.

A II 24551